ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

«ԲՆ-ԷԱՃ-ԾՁԲ-19/02» ծածկագրով Էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովի նիստի

ք.Երևան **« 16 » « հունվարի » 2019թ.**
ժամը 14:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Է.Մերյան
Հանձնաժողովի անդամներ՝
Մ.Այդինյան
Ա.Փաշայան
Հանձնաժողովի քարտուղար՝ Լ.Զոհրաբյան

1. «ԲՆ-ԷԱՃ-ԾՁԲ-19/02» ծածկագրով մրցույթի գնահատման արդյունքների ամփոփման նիստի անցկացման վայրը, օրը և ժամը.

(Ռ.Զոբանյան)

1.1. «ԲՆ-ԷԱՃ-ԾՁԲ-19/02» ծածկագրով մրցույթի մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերի գնահատման արդյունքների ամփոփման նիստը կայացել է 2018 թվականի հունվարի 16-ին, ժամը 14:0-ին, բնապահպանության նախարարության շենքում, ք.Երևան, Կառավարության 3 շ., 5-րդ հարկ հասցեում:
Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

2. «ԲՆ-ԷԱՃ-ԾՁԲ-19/02» ծածկագրով մրցույթի հրավերով սահմանված կարգով մասնակիցների վերաբերյալ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնելու և եզրակացությունը ստանալու վերաբերյալ տեղեկություններ.

2.1. «ԲՆ-ԷԱՃ-ԾՁԲ-19/02» ծածկագրով մրցույթի քարտուղարի կողմից 2018 թվականի հունվարի 11-ին, ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 18-ի N 534-Ն հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 19-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն հարցում է ուղարկվել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ: ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե կողմից ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 18-ի N 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 20-րդ կետով սահմանված ժամկետում ստացվել է եզրակացություն առ այն, որ «ՎԵՈՆ Արմենիա» ՓԲԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորություններ չունի:

3. Հանձնաժողովը որոշեց՝

(Ռ.Զոբանյան)

3.1. Գնահատման արդյունքում «ԲՆ-ԷԱՃ-ԾՁԲ-19/02» ծածկագրով մրցույթի հաղթող ճանաչել՝ «ՎԵՈՆ Արմենիա» ՓԲԸ-ին:
3.2. Հաստատել պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության տեքստը:
3.3. Պայմանագրի կնքման նպատակով «ԲՆ-ԷԱՃ-ԾՁԲ-19/02» ծածկագրով մրցույթի հաղթող ճանաչված մասնակցին՝ ներկայացնել պայմանագրի կատարման ապահովում տուժանքի ձևով՝ միակողմանի հաստատված հայտարարություն և վճարման պահանջագիր՝ կնքվելիք պայմանագրի գնի 10 տոկոսի չափով:
3.4. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ անգործության ժամկետ չի սահմանվում:

4. Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները և ազգանունները:

Հանձնաժողովի նախագահ՝ _____ Է.Մերյան
Հանձնաժողովի անդամներ՝ _____ Մ.Այդինյան
_____ Ա.Փաշայան
Հանձնաժողովի քարտուղար՝ _____ Լ.Զոհրաբյան